Արձանագրություն N 3
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/4ՏՀ» ծածկագրով բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ մեկնարկ՝ 10.03.2025թ.
ժամը 16:00:
ավարտ՝ 28.03.2024թ.
ժամը 16:00:

Մասնակցում էին՝

Նորիկ Մնոյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)
Արամ Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Հրանտ Մինասյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Էդգար Ֆրանգուլյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Աստղիկ Խաչատրյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Կարեն Բաբախանյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/4ՏՀ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8	info@haldi.am +374 91 430416
2	«Արխինէքս» ՍՊԸ	Արմավիրի մ., գ.Փարաքար, Արարատյան փ., 19/1	archineqs@mail.ru 099 55-98-55
3	««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 1-ին նրբանցք, 24	artsakhroad@gmail.com (+37410) 62 87 85, (+37491) 21 92 43
4	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ք. Երևան, Աճառյան 54բ	llcdorproject@mail.ru +374 10 62 71 10

5	«Սուֆետ» ՍՊԸ	ք. Երևան, Փիրումյանների 4/3 բն.11	sufet16@gmail.com +374 94 60 77 78
6	«Պիկետաժ» ՍՊԸ	Գորիս, Վ. Մամիկոնյան 164/39	piketazh.llc@mail.ru +374 98 099 098
7	«Ռ. ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ	Դավթաշեն, Տ.Պետրոսյան փ. 48/7	rconsultarm@gmail.com 094099010
8	«Մոդուլ» ՍՊԸ	ք. Երևան, Ն. Զարյան 22/3	info@modul.am +37477772670

2. *Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*.

2.1 Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

N	Մասնակցի անվանումը	Արձանագրված անհամապատասխանությունը
1	**«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ**	Հրավերի 2.2.1 կետի 3) ենթակետով սահմանվում է, որ Հիմնական մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները /մասնավորապես՝ պետք է ներկայացվեն անձնակազմի բոլոր անդամների կողմից պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստում՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ, պայմանագրի կատարման համար ներգրաված բոլոր մասնագետների ինքնակենսագրականները՝ հավաստիությունը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված տվյալ անձի կողմից: Սակայն մասնակցի կողմից ներկայացված թիմի անդամների պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստումները և ինքնակենսագրականները վավերացված չեն տվյալ անձի թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Անհրաժեշտ է շտկել:
2	**«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ**	Հրավերի 2.2.1 կետի 3) ենթակետով սահմանվում է, որ Հիմնական մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները /մասնավորապես՝ պետք է ներկայացվեն անձնակազմի բոլոր անդամների կողմից պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստում՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ, պայմանագրի կատարման համար ներգրաված բոլոր մասնագետների ինքնակենսագրականները՝ հավաստիությունը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված տվյալ անձի կողմից: Սակայն մասնակցի կողմից ներկայացված թիմի անդամների պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստումները և ինքնակենսագրականները վավերացված չեն տվյալ անձի թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Անհրաժեշտ է շտկել:

3	**«Սուֆետ» ՍՊԸ**	Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի համար հայտով ներկայացված տեղամասային հսկիչի թեկնածության անվամբ առկա է ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/4Շ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում /նույն ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքների գնման ընթացակարգ/ հայտ ներկայացրած Վասպուրականի ՃՇՇ ՍՊԸ լիցենզիայի համապատասխան ներդիր, ինչը ակնհայտ շահերի բախում է առաջացնում: Անհրաժեշտ է տվյալ մասնագետին փոխարինել այլ մասնագետով: Հրավերի 2.2.1 կետի 3) ենթակետով սահմանվում է, որ Հիմնական մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները /մասնավորապես՝ պետք է ներկայացվեն անձնակազմի բոլոր անդամների կողմից պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստում՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ, պայմանագրի կատարման համար ներգրավված բոլոր մասնագետների ինքնակենսագրականները՝ հավաստիությունը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված տվյալ անձի կողմից: Սակայն մասնակցի կողմից ներկայացված թիմի անդամների պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստումները և ինքնակենսագրականները վավերացված չեն տվյալ անձի թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Անհրաժեշտ է շտկել:
4	**«Մոդուլ» ՍՊԸ**	Մասնակցի կողմից հայտով ներկայացված նմանատիպ պայմանագիրը լիարժեք չէ, բացակայում են պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող կատարողական փաստաթղթերի ամբողջական փաթեթը կամ պատվիրատուի գրավոր հավաստումը պայմանագրի պատշաճ կատարման վերաբերյալ: Հրավերի 2.2.1 կետի 3) ենթակետով սահմանվում է, որ Հիմնական մասնագետների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները /մասնավորապես՝ պետք է ներկայացվեն անձնակազմի բոլոր անդամների կողմից պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստում՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ, պայմանագրի կատարման համար ներգրավված բոլոր մասնագետների ինքնակենսագրականները՝ հավաստիությունը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված տվյալ անձի կողմից: Սակայն մասնակցի կողմից ներկայացված թիմի անդամների ինքնակենսագրականները վավերացված չեն տվյալ անձի թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Անհրաժեշտ է շտկել:

Հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունները գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները որոշեց «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/4ՏՀ» ծածկագրով գնման ընթացակարգի բացման և գնահատման նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել 24.03.2025թ. ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին.

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 **Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ91+600 - կմ98+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ**	
	Նախահաշվային գին 14 323 898 ՀՀ դրամ	
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	**5 575 000**	**6 690 000**
«Արխինէքս» ՍՊԸ	5 770 000	5 770 000
««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	5 800 000	6 960 000
«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	6 000 000	7 200 000
«Սուֆետ» ՍՊԸ	6 250 000	7 500 000
«Պիկետաժ» ՍՊԸ	8 400 000	8 400 000
«Ռ. ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ	8 557 500	10 269 000
«Մոդուլ» ՍՊԸ	11 000 000	13 200 000

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 2 **Մ-2, Երևան-Երասխ-Նորավան-Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ181+250 - կմ181+750 հատվածի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ**	
	Նախահաշվային գին 2 963 909 ՀՀ դրամ	
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	**1 075 000**	**1 290 000**
«Մոդուլ» ՍՊԸ	1 950 000	2 340 000
««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	2 085 000	2 502 000
«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	2 300 000	2 760 000

«Սուֆետ» ՍՊԸ	2 375 000	2 850 000
«Պիկետաժ» ՍՊԸ	2 800 000	2 800 000

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց.***

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2025/4ՏՀ» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին և 2-րդ չափաբաժնի մասով «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ին:

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Խաչատրյան

Հ. Մինասյան

Է. Ֆրանգուլյան

Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Բաբախանյան